

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՆԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՆՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 հունիսի 2011թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների սպառազինության եւ ռազմական տեխնիկայի տեխնիկական եւ տեղեկատվական համատեղելիության ապահովման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մայիսի 19-ին ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՆ պաշտպանության նախարարի փեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների սպառազինության եւ ռազմական փեխնիկայի փեխնիկական եւ փեղեկավարական համափեղեկիության ապահովման մասին արձանագրությունն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում:

2. Արձանագրության նպատակն է իրականացնել միասնական մոտեցումներ Նավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության ուժերի եւ միջոցների կազմում Կողմերի ազգային զինված ուժերից եւ այլ զորքերից առանձնացված միավորումների, զորամիավորումների, զորամասերի եւ ստորաբաժանումների կիրառումը կազմակերպելիս, ապահովել հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների արդյունավետ կառավարումը եւ պայմաններ ստեղծել հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների փեխնիկական, թիկունքային եւ փեղեկավարական ապահովման պահանջների օպերատիվ կատարման համար:

3. «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների սպառազինության եւ ռազմական փեխնիկայի փեխնիկական եւ փեղեկավարական համափեղեկիության ապահովման մասին արձանագրության համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում Նավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության միացյալ շրաքին ներկայացնել առաջարկություններ սպառազինության եւ ռազմական փեխնիկայի նմուշների, դրանց փեխնիկական եւ փեղեկավարական համափեղեկիությունն ապահովող չափանիշների եւ քանակական բնութագրերի ցանկի վերաբերյալ.

- Նավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների պաշտպանության նախարարությունների համաձայնեցրած ժամկետներում հավաքական անվտանգության բազմակողմ ուժերի եւ միջոցների կազմում առանձնացված իր զինված ուժերի միավորումները, զորամիավորումները,

գործամասերը եւ ստորաբաժանումները հանդերձավորել սպառազինության եւ ռազմական տեխնիկայի նմուշների, դրանց տեխնիկական եւ տեղեկատվական համատեղելիությունն ապահովող չափանիշների եւ քանակական բնութագրերի անվանացանկի պահանջները բավարարող սպառազինության եւ ռազմական տեխնիկայի նմուշներով:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Նայաստանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները բխում են ՏՏ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված՝ ՏՏ արտաքին քաղաքականության սկզբունքներից եւ պետության առջեւ դրված սահմանադրաիրավական այլ խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների սպառազինության եւ ռազմական տեխնիկայի տեխնիկական եւ տեղեկատվական համատեղելիության ապահովման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-973